

Ունինք քիչ թե չատ մանչոց համար
արձրագոյն դպրոցներ , բայց կը պակ-
սին մեզ աղջկանց բարձրագոյն վար-
ժարաններ , ուստի կոչում կ'ընենք
« Ներսէս Վարժապետեան » ընկերու-
թիւնը կազմող անձանց ազգասիրու-
թեան , եւ կը յուսանք որ կը փութան
սոսկիսի վարժարանի մը հաստատումմը
որ իրաւունք մը ստանալ աղգային ե-
ւթստագլխողութեան վրայ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

— 333 —

Դեռ տարի ու կէս հազիւ անցած է այն օրէն երբ Նազարեան Ճեմարանի մէջ ի ներկայութեան Հանրային կրթութեան նախարարին Ռուսիոյ դրական աշխարհէն շքեղօրէն եւ եռանդաւոր կը տօնէր Երեւելի հայազգի գիտնական Մկրտիչ Էմինի յիշատակայ գործունէութիւնն։ Եւ ահա այժմ եւս Ռուսիոյ գեղարուեստից եւ դրական աշխարհէն եւ ընդհանրապէս ռուսական ազգին եղանկան պարծանքով կը տօնէ դարձեալ հայ հանճարի մը գործունէութեան հանդէսն։ Այդ հանճարն, որ կը ներկայէ Յ. Այվազովսկիին իւր հրաշալի վրձինով յայտնի է ո՛չ միայն ի Ռուսիա այլ եւ համայն Եւրոպիոյ մէջ։ Եւ ռուսներն այս կէտը կը յիշատակեն մասնաւոր գոհունակութեամբ, որովհետեւ Յ. Այվազովսկի մեծ փայլ տուած է Ռուսիոյ գեղարուեստից գիտութեան, օտարներու առաջ։ Ռուսական մեծ լրագիրներն իւր թարգման հանրային զգացմանց խորին պատկառանք կը խօսին Այվազովսկիի արդիւնաւոր գործունէութեան մասին եւ կ'առաջարկեն որ հայազգի հանճարի յարգելի հանդէսն ունենայ հանրային տօնի երեւոյթ։ Շատ սակաւ պատահած է որ ռուս մամուլն եւ հանրութիւնն այնչափ մեծ կարեւորութիւն ընծայէ իւր գործիչի յորձեւանին, որչափ մեծ կարեւորութիւն կ'ընծայէ Այվազովսկիի յորձեւանի հանդիսին։ Հայոց համար այդ շքեղ եւ պատուաբեր հանդէսը տեղի ունեցաւ շաբաթ օր, սեպտեմբեր 28ին, հետեւաբար եւ հանդէսի նկարագիրը պարունակող ռուս լրագիրներ տակաւին չեն ստացուած։ Այնքաւ ամենայնիւ կարելի է մի քանի մանրամասնութիւն պատմել այդ առթիւ։

Յիսուս տարի առաջ այն է 1837 սեպտեմբեր 28ին, Յովհաննէս Այվազովսկի աւարտեց Ռուսիոյ կայսերական գեղարուեստից Ակադեմիայի ընթացքն ստանալով առաջին մրցանակ՝ այն է ոսկի մեդալիոն։ Այնուհետեւ Պ. Այվազովսկի իւր փայլուն գործունէութեամբ մեծ պատիւ բերաւ Ակադեմիային, որոյ ի փոխարէն Գեղարուեստից կայսերական Ակադեմիայն աշխատեցաւ ըստ կարելոյն վեհ երեւոյթ մ'ընծայել հանդէսին, որ տղի պիտի ունենար Ակադեմիայի խորհրդարանի սրահին մէջ։ Ակադեմիայի հետ միասին Այվազովսկիի յորձեւանը պիտի կատարեն եւ մայրաքաղաքի բոլոր երաժշտական ընկերութիւնները։ Գրաւոր եւ անձամբ պիտի մասնակցին եւ Եւրոպայի գեղարուեստից հաստատութիւններն եւ մասնաւոր անձինք, որոց մօտ մեծ համբաւ կը վայելէ Այվազովսկի, մանաւանդ որ արդէն Եւրոպայի մէջ մասնակցած է գրեթէ բոլոր նկարչական ցուցահանդէսներուն։ Եւ ինքն առանձինն հաստատած է միմիայն իւր գործերու ցուցահանդէսը։ Արկաթեղեաց ընկերութիւնը մասնաւոր գնացք մը յատկացուցած է Այվազովսկիի Թէոդոսիայէ Պետերբուրգ երթալու համար։

Յայտնի է թէ Պ. Այվազովսկի Խրիմի Թէոդոսիայէն է, ուր կը վայելէ մեծ պատիւ ու յարգանք իւր ազաբնութեան եւ առ հասարակ այն բարի գործոց համար զոր իւր մասնաւոր անհատ մատուցած է իւր հայրենի քաղաքին։ Մեծ մարդիկ ընդհանրապէս շատ յարգ չեն վայելեր իրենց քաղաքի մէջ, հետեւաբար Այվազովսկի մե-

ծագոյն մարդոց շարքի մէջ առանձին բացառութիւն կը կազմէ խորին համակրանք վայելելով իւր ծննդեան քաղաքէն։ Թէոդոսիա քաղաքն իւր անհերքելի ապացոյց իւր խորին համակրութեան յորձեւանի օրը պիտի մատուցանէ Այվազովսկիի շքեղակերտ պէջաւոր մը ծածկուած արծաթեայ թանձր կապարիչով, որոյ վրայ քանդակուած է հիանալի դրուագ Ժ. Բրդ դարու արքայական հրովարտակներու ճաշակաւ։ Պէջաւոր մէջ տեղ քանդակուած է Թէոդոսիա քաղաքի տեսքը շրջապատեալ կաղնիի տերեւներէ եւ ոսկի ժապաւէնէ, հետեւեալ վերնագրով «Յ. Ա. Այվազովսկիին մայրենի քաղաքէն»։ Միևնոյն տեղը դրուած կանոսիի երանգապնակ եւ պատկերակալ կտավ մը այդ վրայ կայ հետեւեալ վերնագիրն — «1837-1837 տ.» —. պէջաւոր վերեւ կը գտնուի Այվազովսկիի ազնուականի դիմանշանն, իսկ վարը կը գտնուի Թէոդոսիա քաղաքի եւ նորա գաւառի դիմանշանն, այն է ցորենի օրայ, սլոուզներ, ձուկ ցանցերու մէջ եւ ոչխարներու հօտ մը։ Նմանօրինակ շքեղ նուէրներ պատրաստած են Պետերբուրգի այլ եւ այլ ընկերութիւններն։ Սոյն բոլոր նուէրներն, ուղերձները, նամակներն եւ հեռագիրները պիտի մատուցուին կայսերական Գեղարուեստից Ակադեմիայի խորհրդարանի սրահի մէջ. սոյն մեծ հանդէսէն յետոյ երեկոյեան եւրոպական ժամ 7ին փառաւոր ճաշ մը պիտի տրուի ի պատիւ մեծահռչակ նկարչին։

Պ. Տ.

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ԳՈՒՆՆ՝ ԵՒ ՅՕՐԻՆՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ
ԻՒՐ ՈՒՆԵՑԱԾ ՍԶԵՑՈՒԹԻՒՆԸ

Ներագանգական (encéphalique) ջլային կեղրոններն երկու որոշ վիճակ կը ներկայացնեն (տքնական վիճակ եւ քնոյ վիճակ) որք բաւական կանոնաւոր շրջանաւ մի մէկ մէկու կը յաջորդեն։

Եթէ քունը խոր է, մտաւորական գործունէութեան ամեն երեւոյթները կը ջնջուին եւ անձը պաշտօնական տեսակէտով ուղեղին եւ լսողական եւ շնչառական վիճակի մը մէջ կը գտնուի, եւ սակայն անդական, մարտնչական, շնչառական եւ բոլոր պաշտօնները կը շարունակուին, զգայական զգողութիւններն անդրադարձ չարժուիներ *) (mouvement reflex) յառաջ կը բերեն, մէկ խօսքով, ուղղւոյ կիսագունդները պաշտօնագողար կը լինին ինչպէս որ ստամոքսն երկու մարտնչութեան մէջ անջատելէ կը դադարի։ Այս խոր քնոյ վիճակը միայն քնոյ առաջին վայրկեաններուն մէջ կը տեսնուի։

*) Անդրադարձ շարժումն, անդրադարձ ազդեցութեան արդիւնք լինելով՝ այս վերջնոյն վրայ կը փութամ համառօտ կերպիւ մէկ քանի խօսք ընել։ Ընդհանուր տեսակէտով անդրադարձ ազդեցութիւն անուամբ պէտք է ճանաչել այն ամեն գործարանական դրոյիչ, անջատիչ եւ հակազդեցութիւններն որք զգայական դրոյման մի կը յաջորդեն։ Ուրիշ կերպ նկարագրելով՝ ասի ազդեցութեան մի գործողութեան ձեւափոխութիւն է, եւ այս ձեւափոխութիւնն անդրադարձ կեղրոն կոչուած ջլային կեղ-

յետոյ, բիշ բիշ քունը նուազ խոր լինելով ներքին կամ արտաքին զգայական դրոյման ազդեցութեան ներքեւ ուղղւոյ կիսագունդները կը կարողանան իրենց պաշտօնը կատարել, բայց միշտ երազի պէս անկատար կերպիւ։ քնոյ ատեն կազմեալ գաղափարներն յիշողութիւնը միայն կարող է մեղ իմացնել, բայց քնացող անձանց դիտողութիւնը մեղ կը տեղեկացնէ թէ՛ երազից, գաղափարաց եւ քնոյ մէջ տեղի ունեցած խօսակցութեանց մեծագոյն մասը մտքի մէջ գիտութեան հետք չեն թողուր, սակայն ամենախոր քնոյ մէջ իսկ անկարելի է ըսել թէ՛ ուղղւոյ հանգիստը բացարձակ է։ Մոտ ուղղւոյ շրջանի վրայ բրած փորձերուն մէջ տեսած է թէ՛ քնացողի մը տնտես կոչումը բաւական էր նորա ուղղւոյ արեան շրջանը կերպարանափոխել քնացողն առանց արթննալու եւ առանց ամենաանուաղ յիշողութիւն ունենալու իւր անուան կոչման մասին։

Քնոյ ատեն ուղղւոյ սակաւ արիւն լինելն հեղինակաց մեծամասնութեան կողմէն ընդունուած է, բայց ընդհակառակն ուրիշ հեղինակներ ուղղւոյ համախառնում մի տեղի ունենալը կը կարծեն։ սակայն այսօր բնախօսներու (physiologiste) շատերն ուղղւոյ սակաւարիւնութեան գաղափարին կցեալ թուելով Մոտ, Սալաթէ եւ Ֆրանգի փորձերն նաեւ նոյն ի հաստով կը խօսին։ կրկնապէս ըստ Մոտի արիւնը շրջապատի խոզովակաց մէջ կը խոսի։

Քնոյ ճշմարիտ պատճառը դեռ անորոշ է եւ մինչեւ ցայսօր եղած բազմաթիւ եւ թաղրութեանց եւ ո՛չ մին գոհացուցիչ կերպիւ չէ կարող մեկնել։ քունը ջլային բջի (cellule) հանգստեան վիճակն է ըսելով մեկ նութիւն մը չէ։ Այս մասին եղած ենթադրութեանց ամենէն հաւանադրաւորն է թէ՛ քնոյ ատեն ուղղւոյ ընդունած թթուածնոյ մէկ մասը, աքնութեան ատեն ուղղւոյ մէջ ժողովեալ յազնեցուցիչ գոյացութիւններ ժանդաւարելու (oxyder) յատկացեալ լինելով ուղեղն ունալ թթուածին կ'ընդունի։ Եւ ուրիշ կը հետեւի քնոյ պէտքն ըզգացուի։ Օքսիդէր գորտերն թթուածնազուրկ ընելով այս կենդանիները տեսակ մի քնոյ, լաւ եւս է ըսել կերպարանաւոր մահուան (mort apparent) մէջ անկեալ լինելին տեսած է։

Քնոյ պէտքը կարգ մը զգացումներով կը մեկնուի որ ամեն մարդ փորձով գիտէ, ինչպէս վերին կուպոյ (paupières supérieures), զլսոյ եւ անդամաց ծանրութիւնն, յօրանջումն, զգայման եւ մանաւանդ չօշտման եւ մկային զգացման տկարութիւնն են։ Քնոյ ատեն զարկն (pouls) եւ շնչառութիւնը կը ծանրանան, բնածխաթթոյ արտաքսումն եւ բոլոր անջատումները կը նուազին, եղջերենին (cornée) չոր, բիբն (pupile) նեղացած լինելով ուղեղը դէպի ներս եւ վեր կ'ուղղուին։

Սթոմիւնի մէկ դէպքն քնոյ վրայ ըզ-

րոնի մը մէջ կը կատարուի, օրինակի աղաքաւ եթէ քնացողի մը ձեռքն ասեղով մի խայթենք, այս անձն իսկոյն իւր ձեռքը կը բաշէ, որովհետեւ ասղան պատճառած ցաւն զգայական (sensitif) ջիղերով անդրադարձ կեղրոնը կը հասնի եւ այս կեղրոնն ալ շարժիչ ջիղերու միջոցաւ կը հրամայէ սոյն մասին յատկացեալ մկանց որք անմիջապէս կ'ընդունուի ձեռքը մկանակար նիւթոյ ազդեցութեան ազատել կը ջանան։ Նոյնը տեղի կ'ունենայ եթէ գլխատեալ գորտի մը թաթը թթով մի կամ թէ ուրիշ ո՛ր եւ է բորբոքիչ նիւթով մի զրդենք։

գայարանական (sensoriel) դրդմանց ազդեցութիւնն լաւ կը ցուցնէ. միակողման կողմի վրէժն, մորթային եւ լորձնաթաղանթաց ընդհանուր անզգայութեամբ ախտացեալ անձ մի անմիջապէս խոր քնոյ մէջ ձգելու համար ողջ աչքն գոցել եւ ողջ աչքին խցելը բաւական էր եւ միայն աչքի կամ ականջի դրդումն կարող էր զանի արթնցնել:

Քուն յառաջ բերող պատճառները հետեւեալներն են. մտաւորէ աւելի մարմնաւոր յոգնութիւնն, արտաքին դրդման արեւարանան (խաւար, լուսութիւն ևն), միեւնոյն ազդեցութեանց կրկնումն (մենաձայնութիւն), ցուրտը, քերմութիւնը, մարտողութիւնն եւ վերջապէս մէկ քանի թորեցուցիչ գոյացութիւններն:

Մարդս քնոյ անձնատուր լինել ստիպող պատճառներն եւ զանի կերպարարող ազդեցութիւնները կարգաւ քննենք:

Տարիք. — Մանկութեան եւ պատանեկութեան մէջ կենսական զօրութիւնները զեռ իւրեանց բոլոր ուժն ստացած չի լինելով շարունակ սպառման մէջ կը գտնուին եւ այս սպառումն հիւսքերու աճմամբ եւ քաղցանցմամբ կը ճշդուի. մատաղ հասակի մէջ քնանալու պէտքը խիստ կարեւոր եւ քնոյ գրկումը վտանգաւոր է: Տղայոց կըրթութիւնն ստանձնողը պարտին լաւ գիտնալ թէ՛ իրենց պատանի աշակերտաց ու չաղրութիւնն երկայն ժամանակ պէտք չէ դրդել եւ աշակերտք քնոյ պէտքն զգալնուն պէս զանոնք քնացնեն օգտակար է:

Օրորոցի տղայոց համար քունն անհրաժեշտ լինելով օրուան կէսէ աւելին քնանալով կ'անցնեն. եւ արդէն անոնց համար ժամանակն երկուքի բաժանեալ է, ուտել եւ քնանալ:

Տարիքն յառաջանալով քնոյ պէտքը նուազ կարեւոր եւ նորա յատկացեալ ժամանակը նուազ երկայն կը լինի. ծերոց յօրինուածութիւնը քիչ կորուստ ընելով նոցա աննշակաւութիւնը (nutrition) նուազ գործօն է եւ հետեւաբար վերանորոգման պէտքը նուազ մեծ է:

Սեռ. — Կանայք սովորաբար էրիկ մարդոցմէ աւելի կը քնանան եւ սակայն կանայք նուազ մարմնավարժութիւն ընելով անոնց բով կորուստն եւ հիւսքերու վատնումը շատ նուազ են:

Հաւանական է թէ կանանց քնոյ այս աւելի երկայն տեւողականութիւնն սովորութեան խզիլի մէջ է:

Կազմութեան խառնուածք. — Քնոյ պէտքը նուազ կարեւոր է զօրաւոր եւ արեւնային անձանց քան թէ տկարակազմ, չղուտ եւ դիւրագրգիռ մարդոց. արեւնային խառնուածք ունեցող անձանց ծանր եւ խոր քնոյ միտեալ լինելն արեւնայեղցութիւն (plethore) կոչուած օխտառիթ վիճակը ծանուցող երեւոյթներէն մին կրնայ նկատուիլ: Զաւիթ աւելի գիրութիւնը մարդը քնասէր կ'ընէ եւ նորա տեւողականութիւնը կ'երկարէ:

Անանձնայտուածութիւն. — Ոմանք երկայն ատեն քնանալու կարեւորութիւնը կը յայտնեն, ուրիշներն մէկ քանի ժամը բաւական կը համարին. այս տարբերութեանց ոչ ոք կարող է հաշիւ տալ:

Սովորութիւն. — Սովորութիւնը կարող է քնոյ տեւողականութեան մասին փոփոխումներ ընել, սակայն մարդս իւր կարողութեան լիութիւնը վայելելու համար իրեն յատկացեալ փոքրագոյն աստիճանէն նուազ քնանալէ զգուշանալն կարեւոր է. քնոյ մի մասի գրկումն որ վանական բազմաթիւ միաբանութեանց մէջ գիշերային

ժամասացութեան կը նուիրեն, կարող է, առողջութեան վնասելով, սովորութեան կարգն անցնիլ, որովհետեւ այս օրինաց հպատակողներու նիհարութիւնն, կազմական տկարութիւնն, ախտածին ազդեցութեանց համար նուազ ընդդիմացումն, եւ վերջապէս կանխահաս մահն, նոցա հայթայթած նուազ քնոյ մէջ, մասամբ խիբ, իրենց մեկնութիւնն կարող են գտնել:

Արհեստք. — Կան արհեստներ որոնց պատճառած քնոյ գրկումը ծանր անպատեհութիւններ յառաջ կուգան: Այս կարգին մէջ կը գտնուին գիշերային պահապաններն, հացագործներն, հիւանդանոցաց հսկողներն, նաւաստիներն, հիւանդատնայնամներն ևն. ասոնց ամենքն ալ սովորապէս քնոյ նուիրեալ ժամուց փոփոխմամբ շատ յաճախ յառաջ եկած գէշ ազդեցութիւններն կը յայտնեն: Յարմար տեւողութեամբ քուն մի օրուան կամ գիշերուան մէջ տեղի ունենալով միեւնոյն հանգստութիւնն չէ կարող հայթայթել. առաջի պարագայի մէջ քնոյ ազդեցութիւնն նուազ նորոգիչ է եւ այս արգասիքն լուսոյ եւ աղմկոյ կը վերագրուի որք բնական խթնիչներ լինելով նոցա ազդեցութիւններն միշտ կ'զգացուին:

Կլիմա. — Քունը ցուրտ երկիրներէն աւելի տաք երկիրներու մէջ կարեւոր է. բարեխառն կլիմաներու պող եւ տաք եղանակներն մարդոց ցուրտ եւ ջերմ կլիմայից պէս կ'ազդեն: Ամառը յօրինուածութեան կորուստներն աւելի շատ լինելով քնոյ պէտքը միշտ աւելի մեծ է:

Կերակրում. — Շատ կերակուր եւ մանաւանդ շատ միս ուտել սովորութիւն ունեցողները քնոյ պէտքն աւելի կ'զգան. հակառակ պարագայից մէջ այս պէտքը նուազ անհրաժեշտ է: Բուսեղէն եւ նուազ առատ կերակուր մի քունն իւր ամենափոքր աստիճանին կ'իջեցնէ եւ ոգեկից ըմպելեաց չսփռ աւելի գործածութիւնը մարդս ծանր քնոյ կը մզէ:

Մարմնավարժութիւն. — Մարմնաւոր աշխատութիւնը, մկային զօրութեանց սրբութեան երկու տարբեր կերպիւ եւ երկու հակառակ իրաւամբ քուն յառաջ կը բերեն:

1⁰. Երբ որ մարմնավարժութիւնը չափազանց լինելով յոգնելու աստիճանին հասած է, մարմնավարժութեան պատճառաւ յառաջ եկած կորուստները քնոյ խիստ կարեւոր պէտքն անմիջապէս կ'իմացնեն:

2⁰. Մարմնավարժութեան պակասութիւնը ճիշդ ասոր նման ազդեցութիւններ յառաջ կը բերէ, մանաւանդ եթէ հանգստեան ենթարկեալ անձը շատ առատ ուտելով սովորութիւն բնած է. այս պարագային մէջ քունն ուրիշ մեքենական զօրութեամբ մի տեղի կ'ունենայ որ վարկենական արիւնայեղցութեան մի եւ արեան դէպի ուղեղ ունեցած համախառնական ջանից կը վերագրուի:

Մտաւորական աշխատութիւն. — Մտաւոր աշխատութեան համար քնոյ պէտքը մարմնաւոր աշխատութեան նուազ կարեւոր չէ. սակայն այս հանգամանաց մէջ քունը կարող չէ միշտ ամբողջապէս կատարուիլ եւ աշխատութեան պատճառած դրդումներ երբեմն կրնայ տքնութիւն պատճառել^{*}. այսպիսի պարագայի մէջ եւ եթէ

^{*} Երբ որ մարդ մտաւոր աշխատութեան չ'զբաղած ուժաշափ (dynamometre) կոչուած գործիքով իւր ոյժը փորձէ, աշխատութեան վերջն իւր զօրութեան առաւելութիւնը կրնայ տեսնել: Ուղղոյ այս զորդման պատճառաւ է որ գիշերները մտաւոր աշխատութեամբ զբաղեալ անձինք պատկենուն պէս չեն կարող քնանալ:

մտքի այս ուղադրութիւնը վարկենական է, անպատեհութիւնները շատ մեծ չեն, որովհետեւ առաջի գիշերուան չը վայելուած քունն հետեւեալ օրը գրեթէ միշտ վերստին կը շահուի:

Հիւանդութիւն. — Խել մը հիւանդութեանց եւ մանաւանդ արագաշրջան (aigue) հիւանդութեանց մէջ քիչ շատ կատարեալ տքնութիւն մի կը գոյանայ, կամ թէ տեղի ունեցած քունն անկատար, ստէպ երազներով ընդհատեալ, յուզեալ եւ նուազ նորոգիչ է: Ընդհակառակն ապաքինութեան մէջ քնոյ պէտքը խիստ օգտակար լինելով հիւանդին զօրութիւնները կը նորոգէ եւ իւր վերահաստատումն ապաքինութեան ըսկիզբը ծանուցանող նշաններէն մին կրնայ համարուիլ:

Քնոյ յատկութիւններն. — Հոս նկատողութեան պիտի առնենք:

1⁰. Քնոյ տեւողականութիւնը. — Քնոյ տեւողականութիւնը խել մը պարագայից նայելով կը փոփոխի, ընդհանրապէս յօրինուածութեան կրած կորստեանց՝ եւ հիտեւաբար տեղի ունեցած հիւսքերու ըսպառման ուղիղ կը համեմատուի. այսինքն քնոյ տեւողականութիւնը՝ մատաղ հասակի մէջ, կանանց, տկարակազմ, աւշային, ջրղային խառնուածք ունեցող անձանց բով աւելի երկայն է: Նոյնպէս է նաեւ շատ առատ կերակուրէ, չափազանց մկային մարմնավարժութեան, երկայն մտաւոր աշխատութեան մը ետքը եւ վերջապէս ապաքինութեանց մէջ: Հակառակ պարագայից մէջ քնոյ տեւողականութիւնն աւելի կարճ լինելով երեք չորս ժամէն մինչեւ տասներկու տասնեակնեք ժամ կարող է աւելի եւ ասոնց բոլոր միջին աստիճանները կրնայ գննուիլ:

2⁰. Քնոյ ազդեցութիւնները. — Քունը յօրինուածութեան ամբողջութեանը վրայ լաւ ազդեցութիւն մի կ'ընէ. հաճոյ զգացում մի կը հայթայթէ, մտաւորական զօրութիւնները կը հանգչեցնէ, մտքին իւր թարմութիւնն եւ սովորական կորովութիւնը վերստին կուտայ:

Մկային յոգնութիւնը, թմրութիւնը կ'անհետանան եւ մարդ արթննալուն պէս տքնութեան ատեն վարած կեանքին նոյնը վերստին սկսելու համար տրամադիր լինելով կ'զգայ:

Մարտողութեան վրայ քնոյ ունեցած ազդեցութիւնը մասնաւոր քննութեան մի արժանի է: Ճաշէն անմիջապէս վերջը բնանալու աղեցութիւնը մարտողութիւնն արագացնել է: Այն ատեն կերակուրներն ստամոքսային մարտողութիւնն ամբողջապէս չը կրէլէ յառաջ եւ մէկ մասը դեռ տհաս վիճակի մէջ լինելով՝ նուրբ աղեաց մէջ կ'անցնին, ուրկէ կարող է հետեւիլ մարտողական պաշտօնէից անկարգութիւն մի որ մանաւանդ մարդ արթննալուն պէս կը յայտնուի:

Երբ որ մարտողութեան առաջի չըջանն ամբողջացած է, քունը բնաւ անպատեհութիւն մի չը պատճառելով խաղաղ, հանգաւոր եւ աւելի նորոգիչ կը լինի:

Ճաշի եւ անկողին մտնելու վայրկենին մէջ առ նուազն երկու ժամ միջոցը կարեւոր է, եւ եթէ այս վերջինն երեք չորս ժամ լինի նախամեծար իսկ համարելու է: Շատ երկայն քնոյ մի անձնատուր եղող անձն արթննալուն պէս ինքզինքն անտարբեր եւ թույլ վիճակի մը մէջ կը գտնէ որ յաճախ օրուան մէկ մասը կ'ընդդիմանայ: Ախորժակը տկարացեալ լինելով յաճախ ծանր գլխոյ ցաւ մի անոր հետեւանք կ'ըլ-

լայ : Նուաղ մարմնավարժութեան եւ առաւ կերակուրի մը կցեալ շատ երկայն բուռն արիւնայեղցութեան մասնաւոր պատճառներէն մին կը կազմէ :

Առողջապահական մասնաւոր օրէնքներ : Տղայք ընայեցեալ համար բաղմամբ միջոցներու կրնայ գիտել : ամենէն պարզը զանոնք թեթեւ եւ միօրինակ կերպիւ օրօրեւ եւ շարժելէ կը բաղկանայ : սակայն այս ալ կարեւոր չէ, որովհետեւ այս փոքրիկ է՝ ակներն ինքնիրեննին խիստ լաւ կրնան բռնանալ, բայց նոցա խնամակալներն հսկելու հոգէն ազատ լինելու նպատակաւ զանոնք ընացած տեսելու փափաքը միշտ կը կրեն : Երբ որ տղեկ մը, սովորական պարագայից մէջ կ'ազդարարէ եւ չը ընանար, պէտք է գիտնալ թէ նա կը վշտանայ եւ պատճառն անմիջապէս փնտռելու է : Իմանալու համար թէ՛ արգիւ օրէնքները կամ՝ անհանգիստ գիրք մը զայն կը նեղէ, զնոյ տեսնող մի զայն կը վիրաւորէ՝ եւ կամ խիթը (colique) զանի կը տանէ, որովհետեւ ուրիշ հազար բուն փախցնող անհանգստութիւններ կարող են պատահիլ : Արգելով տղաները ցնցելու, օրօրելու եւ փաթաթելու ազդեցութիւնը, վշտի պատճառները փնտռելու եւ մտադիր հոկողութեան մի արժէքը բնաւ երբէք չեն կարող ունենալ :

Ծանր զբաղմանց երթարկեալ ծերոց եւ չափահաս անձանց քով քնոյ փախուստը յաճախ պատահելուն պատճառաւ, ասոնք երբեմն թմրեցուցիչ դեղերու գործածման կը դիմեն, բայց այս գոյացութեանց ներմուծման հետեւանք եղող համախտութիւնը, նոցա բազմակրկնմամբ, աւելի ծանր պատահմանց մեկնակէտն կարող է լինիլ : Ասկէ զատ սովորութեան կարգն անցնելով մարդ թմրեցուցիչ դեղերուն չափն անզգալ արաւելցնել կ'ստիպուի, եւ երթալով անկէ կը հետեւի բնական զգայականութեան այլայլում մի, մտաւորական զօրութեանց սովորական թմրութիւնն մի, եւ ամփոփի չափազանց գործածութեան բոլոր հետեւանքներն :

Մասնաւոր առանձնախառնութիւնները մէկ կողմ ձգելով, զանազան հասակաց մէջ քնոյ տեսողականութիւնն հետեւեալը լինել պարտի : Նորածին մանկանց համար ժամանակը քնոյ եւ անքեան մէջ կը բաժնուի, պատանեաց համար ութնէն տասն ժամ՝ եւ չափահաս մարդոց համար վեցէն ութ ժամ՝ անհրաժեշտ է : Ծերոց չափերը վեց ժամաւ կը բաւականանան :

Սովորութիւնը կարող է այս օրէնքները կերպափոխել : Քնոյ տեսողականութիւնը, նոյն անձին համար ամեն օր զրեթէ նոյնն է, եւ սովորութիւնն անոր վրայ այն աստիճան ազդեցութիւն ունի որ մարդս որոշեալ ժամուն ինչպէս որ կը ընանայ նոյնպէս ալ կրնայ արթննալ :

Փափուկ, տկարակազմ եւ աւշային խառնուածք ունեցող անձինք՝ աւելի երկայն ժամանակ քնոյ անձնատուր լինել պարտին :

Տաք կլիմաներու մէջ միջօրեայ քնոյ (sieste) գործածութիւնը լաւ եւ խրախուսելի սովորութիւն մ'է, եւ մեր գաւառներուն մէջ իսկ ամառուան խիստ տաք աւուրց մէջ՝ այս սովորութեան գործածութիւնը շատ լաւ կը գտնենք :

Ամեն մասնաւոր կրթութիւն կամ ամեն տարօրէն մտաւորական աշխատութիւն իրմէ անմիջապէս ետքը սովորականէն աւելի երկայն բուն մի կը պահանջէ, որովհետեւ նոցա ազդեցութեանց ներքեւ տեղի ունեցած կորուստները պատշաճաբար վերանա-

րողելու միակ միջոցն այս է :

Ապաքինութեանց մէջ քնոյ պէտքը պարտաւրի լիովին կատարուիլ : այսպիսի պարագայի մէջ կենաց բոլոր կարգի սովորութեանց մէջ ընդունուած սահմանը կրնայ անցընուիլ, եւ օրուան մէջ մէկ երկու ժամ քնոյ զուէրն յաճախ իսկ օգտակար է, որովհետեւ նա զօրութեանց վերահաստատումն երազացնել կը ջանայ :

Գիտողութեան արժանի վերջին օրէնք մը՝ քնոյ մէջ յանկարծակի արթննալէ զգուշանալն է, որ երբեմն բաւական ստատիկ ջգային ձգտումներ հետեւանք կրնայ ունենալ :

ՏՕԳԹ. ՕՆՆԻԿ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՊԱՅԱԶԻՏԵՆ ԻԳՏԻՐ

(ՈՒՆՏԱՒՈՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ)

Ա.

Ռուսահայաստանի Ներսէս Նահանգի մեր նախնեաց սրբազան յիշատակավայրերէն ու մանք տեսնելու կրօնական նպատակաւ առանձնային յեղանակի, օգոստոս ամսոյ 1ին, մեկնեցանք Պայագիտէն երկու օտարիկանց ասանդուղութեամբ դէպ ի գտի : Ճանապարհին Պայագիտի հարաւային դաշտամասն է՝ որոյ հողին հանքային բազալիթութիւնը պրկած են զինք օգտակար լինելէ, հետեւաբար չը կայ ո՛չ ծառ, ո՛չ տունիկ եւ ո՛չ ալ ընտանի բուսեղինաց ցօղուններ, ոյր սոթիւ, ամբողջ տօթը բաւական զգալի է : Արեւորը չը ծանծրցող եւ զուարթօրէն ծափողը մէկ կողմէն երկնադրացի ալեւոր Մասիսի գագաթէն զտուած չոր քամին, իսկ միւս կողմէն սրնգաւոր հովուաց ոչխարի հօտերն եւ ասուակներն խուլ խոտովածն են : Բնութեան այս դաշտային երեւոյթէն պահ մը յետոյ առաջին անգամ կը պարզուի ուղեւորին աշայ տոջեւ տրեւմտեան կողմէն Արծաթի պատմական գեղաւոր լեռնաշղթան, հետի Պայագիտէն իբր երեք ժամ Զիւնկիւր կոչուած սարերու ձորակներու մէջ : Աւելի 40 տուն զոտ հայ բնակիչ, մէկ եկեղեցի եւ երկու վանք, որոցմէ Ս. Գեորգի աւերակ, իսկ Մարգարէ վանքը՝ կառուին է : Սոյն գիւղն, ըստ անանկութեան, տեսնող ունէր տասն հազար տուն բնակիչ, որոյ աղայացոյցն է ընդարձակ դերեւանները, աւերակաց հետքերն եւ ժողովրդական ճոխ աւանդութիւնը : Հոս էր ի հունմն մեր Գարեղեան նախարարութեան գործնոցն, հոս է այժմ Աղէքսանդր Սեւեռնյան շիրիմն, եւ հոս եղաւ այն նշանաւոր Արարական արշաւանաց ճակատամարտն, որ Արծափայ անունն անմահացուց պատմագէտներու սրտին խորքը : Հրածելա տալով այդ պատմական գեղջուկին, հասանք առ հապա Գարա-Բուլաղ աղբիւրն, հանգստացանք իւր հարուստ մարգարէտնին վրայ, մեր աղբաւն (նախաճաշ) ընելէ եւ ընտիր ջուրն ըմպելէ վերջ բարձրացանք ձէկէլի սարին զաւիզներէն դէպի գագաթ երկու ժամէն քրտնաթոր : Հոս կարաւանը վրանաբնակ քրդերու հաստատութեանց մօտ, համանուն սարի Դաւրուս լճին քով իջաւ գիւղերու, ուր է սահմանագլուխ ընդ մէջ Ռուս եւ Թուրք կառավարութեանց : Գիւղերն անցուցինք գրեթէ առանց բունի, Հնդկաստանի գետինն, պաշտօնը վարող մեր քեռնակիր եղբերու անյաղ դարման ուտելն

եւ Մասիսի ահա ելի բաժնութիւնն, եւ աստուղներու աստոտումը գիտելով : Հուսկ ապա, յաջորդ օրը լուսնալուսն ուղեւորեցանք Որկովա կամ ըստ Թուրքիա Արծրունեոյ Գիւնայ քլէէ լայնագագաթ սարին վրայ, յորմէ տեսանք Սարատոյ ընդարձակ տարած ծովաւան իւր շէնքերով, եւ իջնելով իւր լայնանիստ զաւիզայրն հասանք Որկով գիւղըն, որ շինուած է Արարատի գոյաին հիւսիսային եզերքն : Որկովա սարին եւ Մասիսի մէջտեղն է անուանի Արշակունին, որ մեր նախարարը կործանեցին : այս բազալայժմ կ'ըսուի Խարապա-Բաժառ — Աւերակ քաղաք —, եւ ունի իւր քով քրդաւանակ գիւղեր : Որկով գիւղին մէջ կայ ռուս զօրաց պահականոց, ուր կը նստին խաղախներ իրենց պետերով եւ ըզզէզով — օգնական մարտապետի —, որոյ պաշտօնն է անցադիրներն եւ բեռներն աչքէ անցունել : Սոյն պաշտօնէին բացակայութեան եւ փոխանորդ մը իսկ չ'որոշած լինելուն՝ յանիրաւի բնադատուեցանք մի քանի կարաւանաց հետ մեր եւս սաստիկ չորութեան տակ սպասել ցգալուստ իւր ճիշդ ութ ժամ եւ չը մտնել Ռուսաստան : Իսկ երբ ըստ տաճկաց ժամ 9ին եկաւ մարտապետի Վրացի նոյն օգնականը, կատարեց իւր պաշտօնական գործողութիւնը : Ես ասանց ընկերանալու զանգաղաբայլ եղանց կարաւանին, առանձինն գացի Իգտիր եւ երեք ժամէն հասայ հոն ապահով, որ Պայագիտէն տասն ժամ է :

Բ.

Իգտիր ուղեւորողին հազին օքսմակ է Որկովա սարն, որոյ աջ բազուկն է անախ Մասիս, ուրիշ սերեց եւ երկրորդ անգամ մարգարային ազգն, իսկ ձախը՝ Բամակ լեռն, որոյ շղթայն կը հասնի մինչ ի Բագուն — Իւշ-Քլիւէ — Վարազ լեռան մօտ : Բամակի սարին հիւսիսային կողմն է Բարթոլ լեռն, որոյ ստորոտն է Երուան դակերտ հին քաղաքը : Բամակի եւ Բարթոլ սարերու միջաշղթայն կը կոչուի Սինէք, ուր կը բնակին ռուսահայտակ քրդեր : Սոյն ուղեղնաձեւ չրջապատ ունեցող լեռանց Սուրմէլի կամ Սուրբ Մատի կոչուած միջավայրի Արարատա գաղտնամասին վրայ է շինուած Իգտիր գիւղաքաղաքն, որ ընդ իշխանութեամբ Թիֆլիզի Նախնէին եւ Ներսէսի նահանգապետին գաւառապետութիւնն է, զորդարեալ եւ չրջապատեալ ընդարձակ պարտէզներով եւ բարտի բարձրաբերձ ծառերով : Աւելի 600 տուն բնակիչ, որոց 550 տունը Պարսկաստանէն եւ Թուրքաստանէն գաղթող եկւոր հայեր են, իսկ 70 տունն Ալէքի պարսիկներ : Հայք ունին մի եկեղեցի Ս. Սահակ անուամբ երկու բանաւայրք, որոցմէ մին տեղական Աղա-Խանի, Աւագ-Խանի եւ Տէր-Ստեփանեանի երեք կուսակցութեանց վերջնոյն պարապետն է : Սոյն եկեղեցւոյ ճակատագրին է : Երկնեցա Ս. Սահակ եկեղեցին 1842ին : յորմէ կը հասկըցուի վերջին նորոգութեան տարեթիւն : Սոյն եկեղեցին Պարսից տիրապետութեան ժամանակ մի փոքր մատուռ է եղեր տեղացի քիչոր հայերուն, ապա ընդարձակուած է :

Հայք ունին նաեւ երկու վարժարան մին արական եւ միւսն իգական յորում կ'ըսաւ իսկ են : 104 ուսուր, 50 դուստր : Կուսուցանեն 5 ուսուցիչ եւ երկու ուսուցչուհի : Աշակերտներէն հարուստը թողալ կը վճարեն, ամսական 47, 9 մանէթ, ըստ իրենց կարողութեան : Վարժարանաց տա-

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (6)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԲԵՐ)

ԺԶ.

Թարգմանչ հանուժէր հաւատար կարծես իր աչաց՝ Թէեւ Սոսուն էր դիմաց . տէ՛, հրամեցէ՛ք նստէ՛ք, շատ նազլա՞ն մի լինիք, կ'ըսէ եւ իրեն վերմակի տեղ ծառայող կապերտը կը պարզէ:

Լոսուն ներքին պատերազմ մը կը մղէր իր համեստութեան հետ . մարդկային կիրքն իր ահեղագոյ որոտումները բարձած համեստութեան թաղուհին ընկճելու աստիճանի չափ, երկպառակութեան դատապարտած էր նորա ներքին մարտը . կը մըտածէր իր հոն դնալուն, կը կարմրէր եւ միւս կողմէ առ Սիսակն տաճած ճշմարիտ սէր եւ իր սրտի բուռն զգացումները կը յաղթանակէին եւ ինքն իրմով մեծ իրաւունք կուտար իրեն . քանի որ մարդ ենք, կ'ըսէր, ինչ որ մարդկային է եւ օրինաց սահմանին մէջ՝ տոկո՞ւ չէ երբէք:

Թարգմանչ հանուժը նկատելով Սոսունի երկրայական մտածմանը մէջ լինելն, ի՞նչ կը խորհար, աղքիկ, կ'ըսէ, «նազլան պօզուէ՛ք», ինչ որ Սոսունած քո ճակտին գրած է այնպէս կ'ըլլայ: Գիտցած եղիր որ այսպիսի խնդիրները զիպուածական բաներ չեն, եւ շատ խորհրդաւոր են . այս մասին շատ փորձ պատմութիւններ գիտեմ, բայց չեմ ուզեր ձեզ ձանձրոյթ տալ եւ, նրա տեղէնք, ինչո՞ւ կը նայիք:

Գո՛հ եմ, բարի Թարգմանչ հանուժ, իմ մտածածը ուրիշ է, կ'ըսէ Սոսուն:

Ժամանակը կորսնցնելու միջոց չը կայ, կ'ըսէ Գեղեցիկը, սիրելի Թարգմանչ հանուժ, ինչ որ պիտի ընենք շուտ ընելու ենք . վարդ խաթունը պատուիրեց որ Սոսունը շուտ վերադառնայ:

Ինչ պիտի ընենք, Սիսակի քով պիտի գնանք: Սոսունն ալ մեր հետ կ'առնենք, իր մօր բարեւը թող հաղորդէ նա . մենք աւագնէն ընելու ժամանակ չ'ուրիշք:

Կատակը մէկ կողմ կենայ, իմ մեկնելէս ետք եղբորս քով մտած ես, ինչպէ՞ս էր:

Գիշ մ'առաջ եկայ քովէն, երբ ըսի իրեն թէ Սոսունը այս երեկոյ իրեն տեսութեան կը գայ, զիտես թէ ողջացաւ եւ ուրախութեան զիտ չէր ձգեր զորս ելնէի:

Շատ լաւ ուրեմն, երթանք, հիմա կ'ըստես:

Թարգմանչ հանուժը վեր առաւ իր կանիփէ եւ այծու մազէ հիւսուած ոտնամաններն որ բարձր ցցէ մը կ'ախած էր: Մտքի իր ձիւնով ի ճրագը: Գուրս ելան կամացուկ մը տնէ՛: Փայտէ նիզը դրան աջ կողմէն բացուած պատի ծակէն ձեռքով դրան ետեւը քաշեց ու ինքն իրեւ առաջնորդ առաջ անցաւ: Սոսունն եւ Գեղեցիկը նորա ետեւէն զոռչական քայլերով Սիսակի ննջարանը մտան:

ԺԷ.

Աւետարներ հրեշտակի մ'անկողէս ըստ պատգին պէս՝ Սիսակ իր վշտաց անկողնէն անձկանօք կը պատէր այն չքնաղ էակի այցելութեանն որոյ ձայնը միայն հերիք պիտի լինէր շարժարանաց մահճէն ազա-

տել գինքը: Եւ այս բուռն տենջանաց հոսանքը նորա սիրտն ու միտքը իր ալիքներու վրայ առած կը շրջեցնէր զանոնք կեանքի այն խորշերու մէջ որոնք երազող երիտասարդաց զլխաւոր յատկութիւններն են: Երբ քանի մը վայրկեան յամեցան իր անկողնած ժամու վրայ, մտովի սրգիսի դատողութիւններ եւ խորհրդածութիւնք կ'ընէր մարդկային կամաց եւ վիճակի մասին, ընկերականութեան անհատաստութեանց նկատմամբ, ու սրտնեղութեամբ մը կը բացագոնէր: «Կեանքը ծանր բեռ մ'է. որոյ ճնշմամբ շատերս կը հոսին: Ճշմարիտ քաջութիւնն այդ ծանրութեան դէմ դնելն է: Գաղափարային այս սաստիկ պատերազմը դեռ չէր հանդարտած Սիսակի մէջ երբ Թարգմանչ հանուժը՝ Սոսունի եւ Գեղեցիկի հետ ներս մտաւ:

Բարի երեկոյ, Սիսակ ճան, ի՞նչպէս էք: Նայէ՛, տես՝ ով կայ հետս, կ'ըսէ Թարգմանչ հանուժ:

Բարո՛ւ, հազար բարով, դուն քո ընկերներով, կը պատասխանէ Սիսակ:

Կ'երեւի թէ մեր ուշանալու վրայ բաւական վշտացած էք, ինչպէս բնական է արիւն եւ երիտասարդաց գիւրաթեք լինել, բայց դիմանալու էք թէ՛ սրբան մեծ աշխատութիւն կրած ենք:

Ինչո՞ւ վշտանամ, քանի որ իմ կամքէն անկախ պարագայներին ներքեւ կ'ապրիմ, իմ վիշտն այն է որ՝ ասկից ետ ալ այս կըրակով դեռ շատ տապկուելու ենթակայ կ'երեւիմ, եթէ երբէք փրկիմ այս մահճէն:

Գեղեցիկն եւ Սոսունը Թարգմանչ հանուժի ետին կեցած մտիկ կ'ընէին . վերջնայ աչքերն յառած էին անվրէպ Սիսակի անկողնոյ վրայ . նորա բոցավառ բիրբեր շնչաակի կը թափանցէին հիւանդի դէմքն՝ որ ցորեկուան տաքութեան փոքր ինչ խամրած վարդի նման գոյնէն աւելի իր հոտով կ'զմայլեցնէ զմարդս: Սոսունն այդ զմայլմամբ վերացած կը թուէր:

Գեղեցիկն՝ եղբոր սիրոյն զոհ լինելու պատրաստ էր, այն վայրկեանին որ մարդկային կեանքի մէջ նախադուռ մը կը բացուի աշխարհք մանելու, զիտեւով իր եղբոր վիճակը, Թարգմանչ հանուժի ջանքերն եւ Սոսունի յափշտակութիւնը, պահ մը ինքն իւրմէ ելածի պէս եղաւ, եւ ապա ինքզինք զսպելով, Սոսունի ձեռքէն բռնած, միտքին Սիսակի անկողնոյն կը մօտին, իր եղբոր հետ այնպէս խօսելով. «Ղուրպան լինիմ քեզ, Սիսակ ճան, աչքերդ բաց, տես թէ քովդ ո՞վ է կանգնած:»

Սիսակն առջի առթին Սոսունը տեսնելուն ուշաթափ եղած էր, իր քրոջ ձայնն որ այնչափ անուշ կը դար իրեն հաղիւ սխափեց զինքը նոյն թմրութեանն ու Սոսունին նախելով՝ Գեղեցիկն ուղղեց այս խօսքերն. «Սնունդի քոյրս, հիմա այլ եւս երբէք չեմ թերահաւատիր թէ դու այն կարգի անձնաւորութիւններէն ես, որոց կեանք անկեղծութեան հիւսուած մ'է. բառեր կը պակտին ինձ քեզ եւ Թարգմանչ հանուժի չընորհակալութիւնս յայտնելու: Կեանքս ձեր երկուքիդ շնորհ պիտի լինի: Բայց խնդրեմ՝ քիչ մը ժամանակ . . . առանձնութիւն . . . »

Թարգմանչ հանուժն իբր փորձառու ո՛չ Սիսակի սիրտը կ'ոտրել ուզեց եւ ոչ խոհեմութիւնը ձեռքէ թողուց. ուստի ինքն եւ Գեղեցիկն այդ ննջարանի մէկ մուկ կողմը քաշուած, բաւական հեռացան նստան:

Սոսունն իր առաջին գիրքի մէջ կը մը-

րեկան ծախքը կը լինի իբր 5000 մանէթ, որ կը հոգացուի թողաներէն, կըսէր արդիւնքէն, «Աւետարան Գափան» եւ մասնավաճառներու ու գինեգաններու յատկացուցած տուրքերէն. պակասն ալ կը լրացնէ եկեղեցւոյ արկղը: Սոյն վարժարանը կը կառավարուին երեք անուս աղաներէ բաղկացեալ հոգաբարձուաց ձեռք, որոց մէկ հատիկ դործն է նորանոր կուսակից ուսուցիչներ գտնել, եւ ամէն ամսի փոփոխել: սոյն ֆլասակար ընթացքին առջեւ հաղիւ հազ կրցաւ տանել այս տարի լուրջ երկտասարդութիւնը, եւ ուսուցիչներն ամփոփուս պահել: Սոյն կրթարանաց մէջ կը դասախօսուի կրօն. հայ լեզու, Ռուս լեզու. թուարանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն հայոց, պատմ. եւ աշխ. Ռուսաց, ընդհ. աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, երգեցողութիւն, վայելչագրութիւն, գծագրութիւն եւ ձեռագործ, ըստ ծրագրին եւ կանոնագրին կաթողիկոսարանի. որոց քննութիւնք կը կատարեն Ռուս պաշտօնատարք եւ հայեր, վարժարանք Ռուս կառավարութեան ճընշումներէն զերծ չեն: Գասախօսութիւնք կը լինին նորագոյն եղանակաւ, ընդ հսկողութեամբ Գեորգեան ձեռնարանի ընթացաւարտ Պ. Ս. Ս. հարօնեան աւագ ուսուցչին, որոյ ջանքերն իւր աշխատասէր ընկերաց հետ միասին դնահաւուսութեան արժանի են: Իգտիրի օդն ըգգ եւ ֆլասակար է, կը խմեն պղտոր առուակի մը ջուր. փողոցներն հոգոտ եւ կեղտոտ, այնպէս որ քամին ելնելուն՝ մարդ օդ աչքերը կը լեցուն թարձրացած փռիով: Ժողովուրդը մեծաւ մասամբ ենթակայ են տենդի, դոյրի, աչացաւի և ըն հիւանդութեանց, որոց պատճառը ֆլասակար կլիմայէն գտաւ, ճախնային ջրերն, չամբուտ եւ եղէգնուտ տեղերն ալ են, որք Արարատի դաշտին համար ընդ հանուր են: Գովելու արժանի է հայ ժողովրդեան եկեղեցատիրութիւնն, աշխատասիրութիւնն եւ կրթասիրութիւնը: Բայց պարստելի սաստիկ արքեպիսկոսն, այնպէս որ ո՛չ մի դիւքազալաք այնչափ օդի կը մսխէ: Տեղւոյն տուններն աղիւսաչէն են՝ գերաններով ծածկուած, ուսանք՝ բարակերտ՝ բայց միայրիկ, մեծ մեծ պատուհաններով, որոց բակերն եւ տանիքները կը ննջեն բնակիչը ամբոն եղանակին անվախ, արձակ եւ համարձակ տեղւոյն՝ Նիճէսնիկ Շալիկովի Բիւրիմանց անուն հայ երիտասարդին աշխուրջ կառավարութեանը շնորհիւ: Իգտիրի հասարակութեան մէջ աչգատիրութեամբ հոգակուողն է Աղա-խանի գերդաստանն: Իգտիրի հայք ունին երկու գերեզմանատուն, որոցմէ հինն եկեղեցւոյ բակինն է՝ աչքէ անցուցած լինելով տապանաբարերու յիշատակարանը, կ'արտադրեմ աստ ամենահինն. «Այս է տաղան հանգուցեալ Հայտրապէկանցի (Արարատական) Մելիք-Վարդանէս Մելիք-Սահարօնեանի որ փոխեցաւ առ Աստուած. որ ընթեւնու ասացէ Աստուած ողորմեսցի հոգւոյ նորին, ամէն. 1847 ամի 8 օգոստոսի:» Ուրախացուցիչ է Ռուս կառավարութեան գաղթական հայոց բնակարան լինելու համար աստ ձրի հողեր տալն: Իգտիրի մերձակայ հայաբնակ գիւղերն են Խօշ-Խապար՝ 100 տուն, Խալֆալու՝ 100, Ուրգամէր՝ 150, Ախվերիս՝ 120 եւ Բլուր՝ 200 որոց վերջնոյն մէջ կը բնակին ցարդ կամսարական նախարարութեան հայոց շատաւիղներն:

ՆՈՐԱՅՐ

նոր . Սիսակն՝ անմեղ աղանձի մը նման
անձայն կը դիտէ, ու յետոյ ձեռքով նշանացի
կ'ընէ իրեն մօտենալու . . .

ԺԸ.

Սոսուն կարմրած եւ սրտի տարօրինակ
զարկով մը կը մօտենայ Սիսակին . . . իր յան-
կուցիչ ձեռքը նորա տապալցեալ ճակ-
տին կը դնէ ու մեղմ եւ քաղցր ձայնով մը՝
« Ի՞նչպէս էք, Սիսակ, մայրս ձեզ բարեւ
կ'ընէ քեզի » :

Այն մոգիչ պարագայն որ կը համարուի
արդիւնք երկու անձկալեաց գրկախառնու-
թեան, դիւրին է երեւակայել թէ ի՞նչ ե-
րեւոյթ կ'ունենայ . այդ տպաւորութեան
մէջ էին այս զոյգ սոխակները . լեզուներն
կարկամած, աչքերն լճացած, մոռցած էին
ամեն բան, ո՛չ անցեալն եւ ոչ ապագայն,
արբիւն ներկայի բարեղիպութենէն, ան-
մեղ սիրով մը կը համակուէին :

Ժամէ մ'աւելի կը տեւէ այդ լուռ եւ
մունջ տեսութիւնն, եւ ապա Սիսակը Սո-
սունին կը պատասխանէ . « Հազար բարով
եկար, հոգեւոյս հատոր տառարակ, ինչո՞ւ
այդքան ուշացար փրկել իմ կեանքն » :

« Ի մէջ բարւոյն մնաս, հոգիս, դու ես
իմ բարին, կ'ըսէ Սոսուն, Աստուծոյ հովա-
նին պահէ՛ք զքեզ եւ քո արեւ » :

Քո մայրը միթէ դիտէ՞ր իմ քով գտնու-
ող բարեւած էր զիս, կ'ըսէ Սիսակը :

Ազդակի ձեզ այցելելու չէր գիտեր եւ
ինչ փոյթ որ գիտնար, քանի որ ինքն չատ-
անգամ մեր միացման ի նպաստ կը խօսի,
կ'ըսէ Սոսունը, մի ըստ միով պատմելով
նաեւ Աւագ-Աղբիւրի մօտ թարգմտական
մի եւ Գեղեցիկ հետ տեսնուիլն, եւ իրեն
գալու պարագայի վրայ մոռնելն ու դիւ-
րացնելն :

Իրօք որ Վարդ է ձեր մայրն, դուք ալ
անոր հոռով սնած եւ նոյն հոռու կը բե-
րէք ինձ : Հաւատացէ՛ք Սոսուն, այս վայր-
կենէն ցաւերս բոլորն ալ հալեցան ձեր ա-
նու խօսքերով ինչպէս այն թանձրամած
ծիւնները կենսատու անձրեւի ցողովը : Վաղ-
ուրէն սկսեալ անկողինը չը պիտի մտնեմ .
միայն քանի մ'որ ոտքի վրայ հոս առանձին
պիտի անցունեմ որ զձեզ տեսնելով կա-
տարեալ ապաքինութիւն գտնեմ, որպէս զի
առաջիկայ շաբթու մեր ոչխարաց լեռնա-
բօսը գնամ . դիտեմ որ դուն ալ քո Վարդ
մօր հետ հոն պիտի մնաք, այնտեղ շատ
յարմար տեղեր կան մէկգլուխ տեսնելու :

Բնութեան այս սիրազոյգ սոխակներ որ
պարզ եւ անմեղ սիրոյ եւ ճշմարիտ միաց-
ման խանդով կը կիլուին, զերծ փառաբ-
շական գծուծ շարքերէն կը խօսին ան-
կեղծութեան եւ սուրբ սիրոյ առանցքի վը-
րայ, ու իրենց բնական երջանկութեան մի-
ջոցների մօտին . միեւնոյն պարագային
խառնելով նաեւ անմեղ կատակներ իրենց
խօսից եւ պատմութեանց հետ, ինչպէս
մեղր կարագի եւ կորեակը կաթի հետ կ'ը-
սեն մեր գիւղացիները :

Գիշերը կէս եկաւ, կ'ըսէ Սոսուն եւ
մայրս ալ ինձ պատուիրեց շուտ դառնալ,
չը լինի թէ հայրս խմանայ, ոտքերս չեն
բռներ, եւ սիրտս երբէք չ'անջատուիր,
բայց անագորոյն պարագայները կը բռնա-
դատեն զմեզ . ո՛հ, ինչպիսի հակոտնեաց
վիճակ եւ ինչ անբախտութիւն . . . սո-
խակը վարդէն եւ պարծեալ այծեամբ պաղ
աղբիւրէ մը հեռացնելու շախ ծանր է մեր
այս բաժանումը : Բայց յոսանհատելու չ'ենք,
հոգիս, հաստատաբանութիւնն եւ համբե-
րութիւնը պիտի լինին մեր փրկութիւնն :

Որքան որ կը մեկնիմ, սակայն սիրտս ձեր
քով կը մնայ . ձեր ուրուականն հոգեւոյս մէջ
պատկերացած է . երբէք եւ ո՛չ մի բան
չը պիտի կրնայ ջնջել զայն : Իմ վերջին
եւ առաջին ուխտն է ձեր հետ մէկ բարձի
վրայ ապրիլ, կեանք տալ եւ կեանք առ-
նել, Կերեղման միայն պիտի կրնայ դըր-
ժեւ սոյն ուխտս : Եւ սակայն ինչ որ լինի
առ այժմ համբերութիւն եւ զգուշութիւն
մեր նպատակը պիտի պսակէ : Գնամ ու-
րեմն . գնամ . պատուոյ նախանձախնդրու-
թիւնն եւ համեստութեան քողը՝ անզգու-
շութեան տխուր հետեւանքներն անհա՛ կը
գրաւեն երեւակայութիւնս, ամեն բանէ
վեր կը սիրեմ զձեզ եւ պատուս ձեր պար-
ծանք կը համարիմ . ուրեմն զայն անա-
ղարտ պահել ուղածս ժամանակին զձեզ
գլխովին սիրել ըսել է . . . մնա՛ք բարով,
սիրտ առէք . . . ցորեկի մէջ միշտ ձեզ պի-
տի երեւնամ մեր դռնէն ու գէթ հեռուէն
զիրար տեսնելով փոքր ինչ սրտերնիս հան-
դարտի մինչ առաջիկայ շաբթու երեկոյ՝ մօրս
հետ լեռնաբօս կ'երթամ, թերեւս միասին
ճանապարհ ելնենք, հոն շատ երջանիկ պի-
տի լինինք : Դարձեալ մնա՛ս բարով, ըսե-
լով կ'սկսի իր քայլերը գէպի թարգմտական
նուա՛ եւ Գեղեցիկն ուղղել, որոնք քնոյ
ծանրութեան ներքեւ ընկճած կը խորդա-
յին բերանաբաց :

ԺԹ.

Սոսունն հանդարտօրէն ձայն կուտա
թարգմտական եւ Գեղեցիկին : Քուշը
նոցա վրայ շատ աղիած լինելուն, սկզբան
չեն կրնար որոշել ուր տեղ լինեն, յետոյ
կ'ամփոփեն ինքզինքնին, ոտք կ'ելեն ա-
ռաջին զգուշութեամբ ու Սոսունը մինչ Տա-
նուաէր Սիրունի դուռը կը տանին :

Գիշերուան ժամ եօթին մօտեցած եւ
աբրոր՝ մեր գեղջուկների բնութեան ժամա-
ցոյցն՝ երբեք անգամ խօսած էր : Ամեն կողմ
խորին լուսութիւն մը կը արկէր խաւարի
թանձր վարագոյրի ետին ծրարուած : Տա-
նուաէր Սիրունի դրան հաւատարիմ պա-
հպան թափաղ անուն գամփոփ՝ իր խոշոր
գլուխ սեմի վրայ դրած հորիզոնական գիր-
քով մը անհոգ պառկած է : Ոտնաձայն առ-
նելուն կ'ստանուէ՝ սակայն իր սուր հոտա-
նութեամբ՝ զինք ամեն օր կերակրող Սո-
սունի ներկայութիւնը կը հասկնայ, կը վա-
զէ՝ իր արիւմ դստերը կը քննի, կարծես
թէ նա ալ նմա կը խնդակցի : Գրան մօտե-
նալով փոքրիկ քարով մը զայն կը բաղխեն :
Վարդ խաթուն որ մեծ մոտատանջութեան
մը մէջ տարուբերութեամբ անքուն անցուցած
էր մինչ նոյն ժամուն, անմիջապէս դուռը
կը բանայ :

Բարի գիշեր, կ'ըսեն, տիկին Վարդ,
ներողութիւն, խօսքի մէջ բռնուելով շատ
ժամանակ կ'որոնցուցինք :

Հոգ չ'է . միտակ ըսէք ինձ տեսնեմ .
աղջկանս գալն ոչ օր գիտցա՞ւ :

Երբէք, բացի մեզմէ եւ . . . Շնորհա-
կալ եմ, խաղաղ բուն կը մաղթեմ, եւ կա-
տարեալ առողջութիւն ձեր հիւանդին »
ըսելով Վարդ խաթունը դուռ վրան քա-
լեց ու Սոսունի հետ անկողինը մտան : Ին-
քը իր փնտած գտնելուն հանգիստ սըր-
տով անմիջապէս սկսաւ խորդալ, բայց Սո-
սունը հազար ու մէկ մոտածումներէ ու ե-
րեւակայութիւններէ, բաց աչքով լուսա-
ցոյց այն գիշերը :

« Դժբախտութիւն եւ ամենամեծ դժ-
բախտութիւն մ'ալ այս վայրկեանական տե-
սութեամբք իրարմէ անջատուիլն է » կ'ը-

սէր Սիսակը երբ մեկնեցաւ իր քովէն Սո-
սունն . ի՛նչպէս կրնամ լուսցնել այս գի-
շերն, երանի՛ թէ տեսած չ'ըլլայի զինք .
այս ի՛նչ շարժարանք, ի՛նչ տաղնապ, նորա
ուրուականը ներքին մարդուս հետ կը փաթի
եւ ես իսկապէս ոչի՛նչ չ'ունիմ . . . բարէ՛,
քանի խեղճութիւն . . . » : Ահա այս վեր ի
վերոյ մոտածումներն եւ երազները խռովե-
ցին Սիսակի քունն եւ առաւօտ՝ ժամահարի
զանգակի ձայնն առաջին անգամ լսելուն,
դուրս ցատքեց անկողնէն . եթէ օտար մը
այն տեղ լինէր, չէր կարծեր որ նա Սի-
սակն էր : Աղբիւրը կը վաղէ լուսացուելու
ամրան պաղ ջրով, երեսը դէպի աղօթարան
դարձնելով կը խաչակնքէ զինք եւ կ'օրհնէ
Բարձրեալն :

Մկրտն, որ սովորութիւն ունէր ամեն
ընդ արշալոյս դարձնուլ աղօթել եւ նախ
Սիսակին առողջութիւն մաղթել, նա երբ
աղբիւրէն Սիսակի գալը կը տեսնէ կը դար-
մանայ եւ խնդութենէն ապշութիւն մը կը
տիրէ իր վրայ . սակայն ոչինչ չը հարցնէր,
իր աղօթքն աւարտելով տուն կը վերադառ-
նայ ու Թարգմտական թշուաթեան ար-
ժանիքի վրայ կը մտնայ . . .

Դ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

(Շարունակ է)

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Բ Ո Յ

Սեպտ. 26 էն Հոկտ. 2

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Պալատիոյ եւ Արեւ. Բուժէլի երեսփո-
խանական ընտրութիւնք, որք ընդհանուր
հետաքրքրութեամբ կը դիտուէին, լրացան
շաբթուս մէջ և Պալատ կառավարութեան
նպաստաւոր արդիւնք տուին : Ընտրողա-
կան գործողութիւնք ընդհանրապէս կա-
նոնաւոր կերպիւ կատարուեցան ի Սո-
ֆիա եւ այլ գլխաւոր քաղաքաց մէջ . իսկ
ի Բլէժնա, Գաստրովիճա, Օլսովիճա եւ
այլ գիւղաքաղաքաց մէջ՝ որք ընդգիմա-
ղիւր կուսակցութեան կեդրոն են, օտար
գործակալաց թելադրմամբ արիւնահնդ կը-
ռիւներ ծագեցան և բաւական թուով մար-
դիկ վիրաւորուեցան եւ մեռան : Վառնայի
մէջ ամեն ինչ խաղաղութեամբ կատարուե-
րէ : Բուժէլի իսլամ և յոյն բնակիչք մաո-
նակեցան քուէարկութեան : Նոր կազմելի
Սոսլանիյէն պիտի բաղկանայ 290 երես-
փոխաններէ, որոց 250 ը կառավարական են
եւ 40ն ընդգիմաղիւր կուսակցութեան կը
պատկանին :

—Եւրոպիոյ լրագիրք ընդհանրապէս մեծ
կարեւորութիւն կուտան Քալնոքի կոմսին
եւ Պ. Քրիսթիի այս օրերս Պիզմարք իշխա-
նին հետ ունեցած խորհրդակցութեանց եւ
կարծիք կը յայտնեն : Թէ Զարին ի մօտ
Բեդրսպուրկ վերադառնալէն յետոյ Եւրո-
պեան առ կախ խնդիրք կարեւորագոյն ե-
րեւոյթներ պիտի ստանան : Պ. Քրիսթի
Հոմ վերադառնալուն, յայտարարեր է
բարեկամի մը, որ եթէ անակնկալ պատա-
հարներ չը ծագին՝ եւրոպեան խաղաղու-
թիւնն ապահովեալ է երկար ժամանակի
մը համար :

—Ճրանսայի պատերազմական նախա-
րարութեան սպայակոյտի դեր-նախագահ

Քաղաքէն զօրավարը պաշտօնանկ եղած եւ բանտարկուած է, պատուոյ լէզէնի պատուանշաններ առնել ծախելուն համար: Այս դէպք շատ կ'զբաղեցունէ բարիքեան մասունը:

—Թայֆին կ. Պոսոյ թղթակիցը կը հեռագրէ թէ Ղազի Մուսթար փաշա Սուէզի ջրանցքին չէզոքացման անգլո-ֆրանսական բանակցութեանց նկատմամբ աննպաստ տեղեկագիր մը ղրկած է առ Բ. Գուռն, Պատուիրակ փաշայն կ'ըսէ թէ անգլո-ֆրանսական մտադրեալ կարգադրութեան լուրն Եգիպտոսի ամեն դասուց մէջ խորին դժգոհութիւն պատճառած է, եւ Եգիպտոսի չը պիտի ընդունին զայն, եթէ Թուրքիա չը վաւերացնէ անգլո-թուրք համաձայնութեան արգիւնքը:

—Վիէնայէ կը հեռագրուի առ Թայֆ թէ այլ եւ այլ կարեւոր անձնաւորութիւնք փորձեր են իրաւախօսութիւն մը գոյացնել պուլար Կառավարութեան եւ Ռուսիոյ միջեւ: Պ. Ստամբուլով սկզբամբ չի հակառակիր, բայց կ'ուզէ որ ամեն ապագայ բանակցութեան ց հիմերը լինին ասոնք: (Ա.) Խնամակալութեան նախորդ կառավարութիւնն օրինաւոր ճանչուի. եւ (Բ.) Ֆերտիման իշխանը պահուի:

—Պեւրնէ կը հեռագրուի առ Թաւ թէ եւրոպեան պատերազմի պատճախանութեանց նկատմամբ յատուկ պայմանագիր մը կ'ընած են Գերմանիա եւ Ռուսիա:

—Գերմանիա նիւթական գոհ սցում մը տուաւ Ֆրանսայի՝ սահմանագլխի նոր դէպքին առթիւ: Բարիպի դեսպան Միւլենդէր Կոմսը Պ. Ֆրանսէի ներկայանալով, վերստին ցաւ յայտնեց յանուն իւր Կառավարութեան եւ յանձնեց յիշուած հազար ֆրանք (250,000 շրուշ), զոր գերման Կառավարութիւնը կուտայ սպաննեալ Պ. Պըրիւտինի ընտանեաց: Բարոյական գոհացումն այսչափ կատարեալ չէ. Եթէ Բաւարիան զօրավարը նիւթակէս պատժուէր, Ֆրանսայի տրուած գոհացումը կատարեալ կը լինէր: Բայց յաւաստի չէ որ զիւր զինուորական պաշտօն վայրագ ճշդութեամբ գործադրող այս զինուոր պատժուի: Գերման լրագիրք միահամուռ կը չքմեղանեն զԲաւարիան:

—Ալգեան լեռնաշղթային Մեծ-Սէն-Պիւրտուի գագաթման մօտ այս օրերս երեւան հանուեցան հինգ մեծ զոհարաններ օրաքարէ (կրակէ) եւ քարեղէն բազմաթիւ նիւթեր: տապաւններ, դանակներ, եւ, որք հեթանոսութեան ժամանակ կը գործածուէին զոհերու համար: Զուիցերեան լրագիրք առաջնակարգ կարեւորութիւն ունեցող պատմական գիւտ մը կը համարին զայս: զի կ'ապացուցանէ թէ, նախ, հեթանոսութեան ժամանակ Սէն-Պիւրտու լեռը զոհարան մ'էր, եւ թէ, բաց աստի, քարեղէն դարուն մէջ, Վալէի քաղաքը (զուիցերեան գաւառն) արդէն մարդկային բնակիչներ ունէր:

Ն Ե Ր Ք Ի Ն

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վաւարիան Տիգրան էֆէնդի Եւսուֆեան, անգամ Վերաքննիչ տեսնին, Առեւտրական Ս. Սեւեկի անգամ անուանուեցաւ, պաշտօն զոր յառաջագոյն եւս վարած է իւր ծանօթ հմտութեամբ եւ փորձառութեամբ, եւ թէ Մեծ. Յովհաննէս էֆէնդի Թորոս-

եան Սիւլեւարի նախնական դատարանի անգամ անուանուեցաւ:

—Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ աղամանդադարդ ոսկի ընչապատիւ մը նուիրել հեռագրաց եւ թղթատարութեան ընդհանորէն վսեմ. Իզզէդ էֆէնդիին:

—Վեհ. Սուլթանը տեղեկանալով որ դատարանաց եւ դատական պաշտօնէից գէմ ինչ ինչ բողոքներ եղած են, հրամայեց որ յատուկ յանձնաժողով մը կազմուի պաշտօն ունենալով ընդհանրական օրէնքները, պաշտօնէից վիճակն, երեւան հանել բարեփոխման կարօտ կէտերն եւ հարկ եղած միջոցներն ի դորձ զննել: Այն յանձնաժողովը նախագահ անուանած է վճարեկ տեսնի առաջին ընդհանուր դատախազ Րիզա պէյ եւ անգամ կարգուած են Փիլիպպի խաւանաց վերադառնալ Ճէմալ էֆ. եւ Պետական Խորհրդոյ անգամ Ֆէրիտ պէյ:

—Աւերդ. Լըֆէրը տեղացի վաճառականաց ուշադրութեանը կը հրաւիրէ յայտ կարեւոր ապրանքի մը վրայ որ դժբաղդաբար բոլորովն երեսի վրայ թողուած է մեր երկրին մէջ, այն է ոչխարի եւ այծի մորթերը: Գիտուած է արդարեւ որ մեր մըսավաճառք ոչխարի եւ այծի մորթերը շատ անճարակ կերպիւ կ'անջատեն, որով շատ մը ծակեր բացուելով, մորթերն անգործածելի կը դառնան: Այս դիտարկութեան պատճառաւ, Թուրքիոյ մորթերը բնականաբար չեն փնտռուիր եւ ստորին գներով կը վաճառուին, այնպէս որ թէ Մարսիլիա եւ թէ ի Ճէնովա՝ թրքական մորթերն Սէնթրիոյ կամ այլ երկրաց մորթերէն 100ին 30 կամ 40 տուագ գին կ'ուենան: Թուրքիա տարին 6,500,000 հատ մորթ կ'արտածէ, բայց այս թիւ կրնայ կրկնապատկիլ, եթէ բիշ մ'աւելի ուշադրութիւն ընծայուի անանոց մորթուած պահուել: Բընականաբար մեր արտադրութիւնը կը վընասուին այս պատճառաւ եւ այս 6 միլիոն 500,000 հատ մորթերն որք լաւագոյն պայմանաց մէջ պիտի կարենային տարեկան շուրջ 540 550,000 ոսկի բերել երկրին, այժմ 310,000 ոսկի միայն կ'արտադրեն, այսինքն 230,000 ոսկեոյ զուտ մնաց մը:

—Գարահիսարէն կը գրեն նոյն Լրագրոյն թէ շահադէտը ոմանք օգուտ քաղելով քաղաքին մէջ տիրող սովէն, մեծաքանակ արմիրը կը պահեն քովերնին, այնպէս որ հացի օխան՝ որ 25 փարա էր, 74 փարայի բարձրացեր է:

—Մայրաքաղաքիս իտալական դեսպանը, Պառն Պան, որ ահագին հարստութեան տէր անձ մ'է, մտադիր է իւր անձնական ծախիւր հոյակապ դեսպանատուն մը կառուցանել տալ ի Բերա, Այաս Փաշա, Գերմանական դեսպանատան հանդէպ: Ապագային մէջ եթէ իւր կառավարութիւնը հաւանի, Պառն Պան նմա պիտի թողու այդ շէնքն: Իտալական դեսպանն արդէն ձեռնարկած է իւր խորհուրդի իրականացման, գնելով գերմանական դեսպանատան հանդէպ գտնուած տունէրէ շատերն:

—Երրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Երուսաղէմի կառավարիչ Բէուֆ փաշային:

—Ռուսական դեսպան Պ. Նիկոլոֆ որ Բեդրսուրի եւ անտի Գերմանիա ուղեւորած էր արձակուրդով, շաբթուս մայրաքաղաքս վերադարձաւ:

—Նոյնպէս մայրաքաղաքս վերադարձաւ Եւրոպայէ, Բէմի տնօրէն Պ. Օպուսնո:

—Սիւլեւարի հրկիզեալք որք Սէրմիլէ

զօրանոցը պատսպարուած էին, հանուեցան եւ իւրաքանչիւրին 3 ալան մէծիտիյէ տրուեցաւ փոխադրութեան ծախուց համար:

—Պարսկական դեսպան Միւզա Մոհսին խան հինգ արթի օրը մայրաքաղաքս վերադարձաւ Եւրոպայէն:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Ամեն. Ս. Պատրիարք Զօր հրաւիրանաց վրայ Քաղաքական Ժողովոյ նորընտիր անդամոց ստուար մեծամասնութիւնն ընդունած է ազգովին իրեն յանձնուած պաշտօնըն եւ այս շաբաթ առաւօտ Ղալաթիոյ խորհրդարանը գումարելի նստին ներկայ պիտի գտնուի զիւան կազմելու համար:

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրն. ընկերակցութեամբ Վսեմ. Մագսուտ Սիմօն պէյի՝ երեքշաբթի օրը Ելմտական պաշտօնատունն երթալով տեսակցեցաւ նախարար Վսեմ. Զիւհտի փաշայի հետ եւ յետոյ Բ. Գուռն երթալով մասնաւոր տեսակցութիւն մ'ունեցաւ Արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշայի հետ:

—Ամեն. Խրիմեան Հայրիկ կիւրակէ առաւօտ հանդիսաւոր պատարագ եւ պաշտօն մատոյց ի հանգիստ հոգւոյ բարեյիշատակ Օտեան Գրիգոր էֆէնդիին, ի Ս. Ներորդութիւն եկեղեցւոյ Բերայի, ուր ներկայ էին Օտեան գերդաստանի բոլոր անդամք ու բարեկամք եւ խուռն բազմութիւն մը պատուաւոր ազգայնոց: Խրիմեան Սրբազան քարոզ խօսելով հանգուցեղոյն վըրոյ, զրուտեց նորա բարեմասնութիւններն եւ հանրային ու ազգային գործունէութիւնը:

—Շաբաթ օրը Պատրիարքական Փոխանորդ Իւթիւճեան Գեր. Գէորգ Մ. վարդապետի անուան տօնախմբութիւնը լինելով բարձրաստիճան եկեղեցականք, վարդապետք, քահանայք եւ երեւելի ազգայինք շնորհաւորական այցելութիւն տուին Ն. Գերապատուութեան:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն. եւս յատկապէս Փոխանորդարան իջնելով շնորհաւորեց Փոխանորդ Զօր տօնախմբութիւնն եւ այս առթիւ իւր հայրական օրհնութիւնները տուաւ:

—Ռուսիոյ հանրային կրթութեան նախարարութեան կողմէ Պ. Կարապետ Կեղեանց Պրուէլ կ'երթայ՝ իբր պատուիրակ ներկայ գտնուելու Պեւրիոյ մայրաքաղաքին մէջ բացուած մանկավարժական տիեզերական համաժողովոյն:

—Կրօնական Ժողովն հեռագրաւ կ. Պոլիս հրաւիրեց Տ. Սարգսեան Սրժ. Տ. Սահակ քահանայն որ այժմ Բարբերդ կը գլուխուի:

—Շաբաթ օրը Բեդրսուրիի Գեղարուեստից Ակադեմիոյ մէջ հանդիսիւ տօնուեր է հայազգի նկարիչ Պ. Յովհաննէս Այվազովսկիի գործունէութեան յիշատակայ յօդէւան: Այս տօնիւ շնորհաւորական հեռագրեր ուղղուեցան յամենուստ առ հայազգի տաղանդաւոր արուեստագէտն: Ամեն. Ս. Պատրիարք Հայրն հեռագրաւ ձօնեց իւր օրհնութիւնն եւ բարեմաղթութիւններ ուղղեց. նմանապէս շնորհաւորութիւններ ուղղեցին հեռագրաւ Միացեալ Ընկերութիւնը, Ռուսերդ-Քօլէճի հայ ուսանողք եւ Արեւելի ու Մասիս վարչութիւնը: Պ. Այվազովսկիի հեռագրաւ շնորհակալութիւն յայտնած է ամենուն:

—Բաղէշէն հետզհետէ անուամ լուրեր

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐՆԵՐ ՀԵՏԵԻՆԵԱՆ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արգելադրողի համար Ambrosial cream, օճառաւ քաւճ ամպլու-ւող մարդու համար. Crème de Fraises մորթի կակոզցնելու համար. Poudre de Cypres զովացնելու եւ ճերմկցնելու համար մորթի. Stillboideփայլ ապու համար մազերուն եւ մորու-քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակուայներու համար. Eau de Chypre արգելադրողի համար. Թաշկինակի հա-մար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-rie Christine. 977 13—26

չառ դէշ գոյներով կը նկարեն տեղւոյն ազ-գային դարձոց վիճակն. Ազգ. ժողովներն անուամբ միայն գոյութիւն ունին եւ վարժա-րանք անկերպարան վիճակի մը մէջ կը գլու-նուին. Կարմրակայ ազգ. վարժարանը մի-այն փոքր ինչ իւր դիրքը կը պահէ, այն ալ շնորհիւ մէկ երկու ազնուամիտ անձանց մասնաւոր հոգատարութեան. Հոսմէական-նութիւնն որ ասկից մէկ երկու տարի ա-ռաջ ելին անուանական տուն ժողովուրդ ունէր, այսօր, շնորհիւ Հ. Ստեփանէ ճու-նոյեանի հոս քննելուն, քանի աւելի տուն ունի:

—Աստի՛ Տօթ. Ստեփան փաշա Ասլան-եան շորեքշարթի օրը մայրաքաղաքս հասաւ Ծրանայէ:

—Եւ դիտէ՛ք ի՞նչ գրեւ թէ Արժ. Սա-հակ Ծ. վ. Այվատեան, որ Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէ վիճակին առաջնորդ ա-կան տեղապահ անուանուած է, իւր խո-հական ընթացքով եւ հաստատամտութեամբ արդէն սիրելի հանգիստացած է ժողովրդ-դեան եւ կը նկրտի երկպառակութիւնները ջնջել եւ խաղաղութիւնը վերահաստատել:

ԹԱԿՈՒՀԻՈՅՆ ՄԱՆԵԱԿՆ

Հեղինակ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻԻՄԱ

Տիեզերահռչակ փրկանքն սոյն հըռ-չակաւոր եւ հետաքրքրաշարժ գործոյն ԵՐ-ՐՈՐԴ հատորն եւս աւարտած ըլլալով, ի վաճառ հանուած է ի գին 12 դահեկանի:

Չորրորդ եւ վերջին հատորն ընդ հուպ պիտի հաստատարուի:

Այս առթիւ կը խնդրուի այն Պատ. բաժանորդներէն որք տակաւին չեն վճա-րած իրենց պարտքն, որ հաճին առանց դժուարութեան հատուցանել իրենց բաժա-նորդագինը զի քաջ պետք է գիտնալ թէ այսպիսի բազմաճախ գործի մը հրատարա-կութեան ձեռնարկելով արդէն մեծ գոհո-ղութիւն մ'ընել պարտաւորած ենք բաժա-նորդաց խիստ ցանցաւ թուոյն պատճա-ռաւ:

Նոյնպէս ԴԱՐՔՆՈՑԱՊԵՏՆ անուն խիստ հետաքրքրաշարժ վէպին (որոյ դաղլիներէնը 220 անգամ տպագրուած է) հայերէնն ալ 220 էրեւնէ բաղկացեալ կը գտնուի մասնա-ւորապէս Մէրճան Չարչարի Աշտեան գրատու-նը, Պոլսոյ բոլոր գրաւաճառաց ըով եւ Բե-ւա, Թիւնէլին դէմ, Նալպանդեան գրա-տունը, չափաւոր գնով:

Յ. ԲՐԻՍՏԱՓՈՐԵԱՆ 1222 2—2

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՌՁԵՈՒՆ ԲԱՌԱՐԱՆ

Հայերէնէ է Դաղլիներէն
Աշխատասիրեաց
ԿՈՄԻՏԱՍ Ա. ՈՍԿԵԱՆ

Սոյն աշխարհաբար բառարանին տպագ-րութիւնն որ ինչ ինչ պատճառներով յա-կամայս դադրած էր առ ժամս, այժմ վե-

րսկած եւ երկոտասներորդ թերթն ար-դէն լոյս տեսած է:

Բաժանորդագինն է մայրաքաղաքիո համար 10, գաւառաց համար 15 դահե-կան արծաթ:

Բաժանորդ գրուիլ փափաքողք, պար-տին ուղղակի դիմել Նշան Կ. Պէրպէրեան տպագրատունն ի Կ. Պոլիս:

1176 1—3

Հայերէն լեզուաւ կանոնաւոր տետրակ բռնել, եւ քիչ մ'ալ դաղլիներէն կարդալ եւ գրել գիտցող երիտասարդ մը կ'ուզուի առ-եւտրական տան մը ըով ծառայելու համար, պէտք է դիմել, Պաշէ Գարու Բասիմ բա-շա խան թիւ 7:

1221 4—15

Վասն Արտօնասեան
Տնօրէն-Պատասխանատու
Ե. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԵՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇԻՄԵՐՆԵՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՐՍՆՈՅ ԴՈՅՆԵՐ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը աներևութիւնէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

“Մէկ շիշը կը բաւէ:” Եւ փորձը ունեցան ամենքը որոնցմիտրագունած մազերը իրենց բնական գոյ-նին դարձան, եւ ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

Կերկ չէ, եւ ամենեւին զեան մը ընեն: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր “ՄԵՐՍՆՈՅ ԴՈՅՆԵՐ” (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիլ ու Կիու Եօքք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-գործներու եւ անգղիացի գեղագործներու ըով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց, Էտմընտ Գարուան, Անգլիական միտերանոց, Նիւքսթը Գալալըրմ. եւ Իգիտօր Լադանտէլա 455, Բերա Մեծ փողոց:

ՀԵՐՄԵՆԵԿԱՆ ՆԵՐԱԿԵՓՈՒՆՔ

ԳԵՂԵՑԿԵՑՈՒՆՈՂ ՄԵՐՍՆՈՅ ԴՈՅՆԵՐ, ՄԵՐՍ ՆԵՐԱԿԵՓՈՒԹՅՈՒՆ, ՄԵՐՍ ԹԵՐՄ:

Ընգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշի-ներէ: Երանք անգամ գործածելով ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեկը եւ ձեռու ընկը պիտի առ-նուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիոնի փայլ, հանդերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ: Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն: Ընհետ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի եւ ձեռքի ցանկը, արեւա-րուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիլ ու Կիու Եօքք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի գեղագործներու ըով:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց, Էտմընտ Գարուան, Անգլիական միտերանոց, Նիւքսթը Գալալըրմ. եւ Իգի-տօր Լադանտէլա 455, Բերա Մեծ փողոց:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց, Էտմընտ Գարուան, Անգլիական միտերանոց, Նիւքսթը Գալալըրմ. եւ Իգի-տօր Լադանտէլա 455, Բերա Մեծ փողոց:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց, Էտմընտ Գարուան, Անգլիական միտերանոց, Նիւքսթը Գալալըրմ. եւ Իգի-տօր Լադանտէլա 455, Բերա Մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ:

ՄԵՐՍՆՈՅ

ՄԵՐՍԵՐՈՒ ՄԵՐՍ ՀԵՐՄԵՆԵԿԱՆ ՆԵՐԱԿԵՓՈՒԹՅՈՒՆ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa apton Row). Կոյնպէս Բարիլ ու Կիու Եօքք:

Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանդիւք եղբայրք բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ փողոց, Էտմընտ Գարուան, Անգլիական միտերանոց, Նիւքսթը Գալալըրմ. եւ Իգի-տօր Լադանտէլա 455, Բերա Մեծ փողոց: